Արձանագրություն 1-19 ԸԺ

<<Արփա-Սևան>> ԲԲԸ ընդհանուր ժողովի

ք. Երևան, Վ. Վաղարշյան 20 19 հունիսի 2019թ.

1. Ընկերության թվով 20452 բաժնետոմս ունեցող անդամներից տարեկան ընդհանուր ժողովին մասնակցում էին թվով 12560 բաժնետոմս ունեցող անդամներ /բաժնետերեր, որոնց պատկանում է բաժանորդագրված բաժնետոմսերի 61,4%-ը/:
2. <<Արփա-Սևան>> ԲԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) խորհրդի քարտուղար Զորիկ Վարդանյանը ժողովի մասնակիցներին տեղեկացրեց, որ քվորումն ապահովված է, ընդհանուր ժողովը համարեց բացված և առաջարկեց ընտրել նախագահություն, ձայների հաշվիչ հանձնաժողով և քարտուղարություն:

2.1. Նախագահության կազմն առաջարկվեց 3 հոգուց.
նախագահ՝ Ռաֆայել Հակոբյան,
անդամներ՝ Պարույր Հակոբյան, Արմեն Հակոբյան:

Բաց քվեարկությամբ նախագահության կազմն ընտրվեց միաձայն:

2.2. Ձայների հաշվիչ հանձնաժողովի կազմն առաջարկվեց 3 հոգուց.
նախագահ՝ Սուսան Խոցանյան
անդամներ՝ Նոննա Յախշիբեկյան, Մելանյա Հարությունյան:

Բաց քվեարկությամբ ձայների հաշվիչ հանձնաժողովի կազմն ընտրվեց միաձայն:

2.3. Քարտուղարության կազմում առաջարկվեց Զորիկ Վարդանյանի թեկնածությունը:
Բաց քվեարկությամբ քարտուղարը ընտրվեց միաձայն:

3. Ժողովի նախագահ Ռաֆայել Հակոբյանը ներկայացրեց օրակարգը.

3.1. Ընկերության 2018թ. տարեկան հաշվետվության հաստատումը;
3.2.Ֆինանսական գործունեության վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի և աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը;
3.3.Շահույթի բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների չափի և վճարման մասին որոշման ընդունումը;
3.4. Կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ;
3.5. Խորհրդի անդամների ընտրությունը;
3.6. Վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրությունը:

4.Օրակարգի առաջին հարցի՝ ընկերության 2018թ. տարեկան հաշվետվության վերաբերյալ զեկույցով հանդես եկան՝

4.1. Ընկերության գլխավոր հաշվապահ Սեդա Փարսյանը: Նա ընդհանուր ժողովի մասնակիցներին ներկայացրեց 31.12.2018թ. դրությամբ հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների մասին Ընկերության և նրա դուստր <<Արփա-Սևան նախագիծ>> ՓԲԸ համախմբված հաշվետվությունները:

4.2. Ընկերության գլխավոր տնօրեն՝ Պարույր Հակոբյանը ընդհանուր ժողովի մասնակիցներին տեղեկացրեց Ընկերության 2018թ. արտադրա-տնտեսական գործունեության տարեկան ընդհանուր արդյունքներին, յուրաքանչյուր ստորաբաժանման կողմից կատարած շինարարական աշխատանքների և մատուցված ծառայությունների ծավալներին: Զեկուցողը համառոտ ներկայացրեց 2019թ Ընկերության առջև ծառացած խնդիրները և նախատեսվող գործունեության ծրագրերը:

4.3. Ընկերության խորհրդի քարտուղար Զորիկ Վարդանյանը ընդհանուր ժողովի մասնակիցներին ներկայացրեց 2018թ. կորպորատիվ կառավարման հայտարարագիրը և առաջարկեց հաստատել այն:

Ժողովի նախագահ Ռաֆայել Հակոբյանը քվեարկության դրեց ընկերության 2018թ. տարեկան հաշվետվությունների հաստատման հարցը:

5.Քվեաթերթիկների միջոցով քվեարկությամբ՝ 12560 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքով ընկերության 2018թ. տարեկան հաշվետվությունները և կորպորատիվ կառավարման հայտարարագիրը հաստատվեցին:

6.Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ ելույթ ունեցան՝

6.1. Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամ Արտակ Վարդանյանը: Նա ընդհանուր ժողովի մասնակիցներին տեղեկացրեց վերստուգող հանձնաժողովի կողմից իրականացված Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների արդյունքին՝ համաձայն որի, 2018թ. ֆինանսական հաշվետվությունները, ֆինանսական վիճակի, ինչպես նաև ավարտված տարվա ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին տալիս են ճշմարիտ և իրական պատկեր: Այնուհետ զեկուցողը ներկայացրեց ընկերության վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը, ըստ որի, ստուգումների արդյունքում ընկերության տարեկան հաշվեկշռում, հաշվապահական հաշվառման վարման փաստաթղթերում, ֆինանսական և տարեկան այլ հաշվետվություններում տարբերություններ կամ սխալներ չեն հայտնաբերվել և հաստատում են տվյալ փաստաթղթերում տեղեկությունների հավաստիությունը:

6.2. Ընկերության աուդիտն իրականացնող ԹՄ Աուդիտի գլխավոր տնօրենի տեղակալ՝ Ղուկաս Աթոյանը ժողովի մասնակիցներին տեղեկացրեց, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները Ընկերության ֆինանսական վիճակի՝ առ 31.12.2018թ., ինչպես նաև այդ ամսաթվի դրությամբ ավարտված տարվա գործունեության արդյունքների և դրամական հոսքերի մասին տալիս են ճշմարիտ և իրական պատկեր՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Վերստուգող հանձնաժողովի և աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը դրվեց քվեարկության:

7. Քվեաթերթիկների միջոցով քվեարկությամբ՝ 12560 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքով վերստուգող հանձնաժողովի հաշվետվությունը և աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը հաստատվեց:

8.Օրակարգի երրորդ հարցի՝ շահույթի բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների չափի և վճարման մասին ելույթ ունեցավ ընդհանուր ժողովի նախագահ Ռաֆայել Հակոբյանը: Զեկուցողը ժողովի մասնակիցներին ներկայացրեց խորհրդի կողմից տարեկան շահութաբաժինների վճարման վերաբերյալ նախապատրաստված որոշման նախագիծը այն է՝

8.1. Արձանագրել, որ կուտակված (զուտ) շահույթը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 4 674 782 000 (չորս միլիարդ վեց հարյուր յոթանասունչորս միլիոն յոթ հարյուր ութսուներկու հազար) ՀՀ դրամ, որից 3 844 185 000 (երեք միլիարդ ութ հարյուր քառասունչորս միլիոն հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամը հանդիսանում է 2017թ. հունվարի 1-ին նախորդող ժամանակահատվածին վերագրվող (այդ ժամանակահատվածի գործունեության արդյունքում ստացված) շահույթ:

8.2. Հայտարարել տարեկան շահութաբաժինների վճարման մասին՝ Ընկերության 2017թ. հունվարի 1-ին նախորդող ժամանակահատվածներին վերագրվող (այդ ժամանակահատվածների գործունեության արդյունքում ստացված)) շահույթից 153 390 000 (հարյուր հիսուներեք միլիոն երեք հարյուր ինսուն հազար) ՀՀ դրամի չափով: Սահմանել, որ մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահութաբաժնի մեծությունը կազմում է 7 500 (յոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

Շահութաբաժինները ստանալու իրավունք ունեցող բաժնետերեր են համարվում այն անձիք, ովքեր 2019թ. հունիսի 14-ի դրությամբ ընդգրկված են Ընկերության բաժնետերերի ռեեստրում:

Տարեկան շահութաբաժինների վճարումը կատարվում է, որոշման ընդունման պահից 10 օր անց, բանկային փոխանցմամբ կամ կանխիկ ձևով՝ Ընկերության դրամարկղից այն առձեռն տրամադրելով բաժնետիրոջը կամ վերջինիս լիազորված անձին:

9.Քվեաթերթիկների միջոցով քվեարկությամբ՝ 12560 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքով շահույթի բաշխման և շահութաբաժինների վճարման մասին որոշումն հաստատվեց:

10. Կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.

Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ Զորիկ Վարդանյանը: Զեկուցողը ընդհանուր ժողովի մասնակիցներին ներկայացրեց նոր խմբագրությամբ կանոնադրությունը և առաջարկեց հաստել այն:

11.Քվեաթերթիկների միջոցով քվեարկությամբ՝ 12560 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքով Ընկերության ընդհանուր ժողովը որոշեց հաստատել կանոնադրությունը նոր խմբագրությամբ:

12. Օրակարգի հինգերերդ հարցի՝ Ընկերության խորհրդի անդամների ընտրության վերաբերյալ ելույթ ունեցավ Ռաֆայել Հակոբյանը: Զեկուցողը ընդհանուր ժողովին ներկայացրեց 6 հոգուց բաղկացած դիտորդների խորհրդի կազմը, միաժամանակ տեղեկացնելով, որ 10% ավելի բաժնետոմսերի տիրապետող ընկերության խոշոր բաժնետեր Պարույր Հակոբի Հակոբյանը և Կարինե Արշավիրի Նավասարդյանը կարող են ընդգրկվել խորհրդի կազմում առանց ընտրության :

Ռաֆայել Հակոբյանը ներկայացրեց առաջարկվող թեկնածուների կազմը.

1. Հակոբյան Ռաֆայել Արմենի,
2. Վարդանյան Զորիկ Հովհաննեսի
3. Պողոսյան Գոռ Միհրի
4.Բելլույան Միքայել Նորայրի

13. Քվեաթերթիկների միջոցով գումարային սկզբունքով քվեարկության ներքոհիշյալ արդյունքով խորհրդի կազմն ընտրվեց:

հ/հ	թեկնածուներ	Զբաղեցրած պաշտոնը	Բաժնետոմսերի քանակը	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1	Հակոբյան Պարույր Հակոբի	Գլխ. տնօրեն	11410	X	X	X
2	Նավասարդյան Կարինե Արշավիրի	-	2673	X	X	X
3	Հակոբյան Ռաֆայել Արմենի		0	12560	-	-
4	Վարդանյան Զորիկ Հովհաննեսի	ՊՏԲ պետ	34	12546	14	-
5	Պողոսյան Գոռ Միհրի	-	0	12539	-	21
6	Բելլույան Միքայել Նորայրի	-	0	12539	-	21

14. Օրակարգի վեցերորդ հարցի՝ վերստուգող հանձնաժողովի անդամների ընտրության վերաբերյալ ելույթ ունեցավ խորհրդի նախագահ Ռաֆայել Հակոբյանը: Նա ժողովի մասնակիցներին տեղեկացրեց, որ վերստուգող հանձնաժողովի անդամ Սպարտակ Եղիյանը խնդրանքով դիմել է Ընկերությանը ազատել իրեն վերստուգող հանձնաժողովի անդամի պարտականությունների կատարումից: Զեկուցողը ընդհանուր ժողովի մասնակիցներին առաջարկեց բավարարել Ս. Եղիյանի խնդրանքը և ընտրել վերստուգող հանձնաժողովի նոր կազմ: Վերստուգող հանձնաժողովի կազմում առաջարկվեցին Անահիտ Աշոտի Հայկարամյանի, Սաթենիկ Վոլոդյայի Ալեքսանյանի և Սուրեն Վլադիմիրի Սարյանի թեկնածությունները:

Վերստուգող հանձնաժողովի անդամների կազմը, ըստ յուրաքանչյուր թեկնածուի, դրվեց քվեարկության:

Քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցող թվով 383 բաժնետոմսեր ունեցող բաժնետերերի քվեաթերթիկների միջոցով քվեարկության ներքոհիշյալ արդյունքով ընտրվեց վերստուգող հանձնաժողովի հետևյալ կազմը՝

հ/հ	Ազգանուն անուն հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
1	Ալեքսանյան Սաթենիկ Վոլոդյայի	383	-	-
2	Սարյան Սուրեն Վլադիմիրի	383	-	-
3	Հայկարամյան Անահիտ Աշոտի	383	-	-

Այդքանով <<Արփա-Սևան>> ԲԲԸ ընդհանուր ժողովն ավարտեց իր աշխատանքը:

Սույն արձանագրությանը կցվում է << Արփա-Սևան>> ԲԲԸ՝
Տարեկան հաշվետվությունը.
Կորպորատիվ կառավարման հայտարարագիրը.
Վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը.
Ձայների հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը:

Ընդհանուր ժողովի նախագահ՝ Ռաֆայել Հակոբյան

Ընդհանուր ժողովի քարտուղար՝ Զորիկ Վարդանյան

Սույն արձանագրությունը կազմված է երկու օրինակով:
Արձանագրության կազմման ամսաթիվը՝ 21.06.2019թ.